



43. ՊԻԾԱՆ ԿԱՄ ՊԻԾԻԿ¹

Ըլնում ա շի ըլնում մի դարվիշ, մի պառավ, մեկել մի Պիծան անմով տղա: Մեկ օր դարվիշը տանից դուս դալու վախտը էդ Պիծանին դնում ա մի պարկի մեջ՝ բերանը կապում ա ու ասում.

— Պիծա՛ն, ես գնում եմ ուրիշ տեղ, ըստեղ կաց ընչանք ետ գամ:

Պիծան, դո՛ւ Պիծան, հենց որ դարվիշը հեռանում ա թե չէ՞ դա տոպրակը ձղում ա, միշիցը դուրս ա գալիս ու գնում նիլում տանձի ծառը:

Դարվիշը ետ ա գալիս, տենում ա, որ Պիծանը տոպրակումը շի, ասում ա. «էդ շան տղեն տանձի ծառը նիլած կլնի»: Ու դորթ, որ գնում ա տանձի տակ՝ տենում ա ծառի վրա նստել ա, տանձերը քաղում ա, ուտում ա, կոթերն էլ ներքև ա շարտում:

Դարվիշն ասում ա.— Պիծա՛ն, Պիծա՛ն, մի տանձ գցես, որ ուտեմ ու կոթը գլխիդ տամ:

Պիծանը շի լսում դարվիշին ու իրան հըմար տանձն ուտում ա, կոթը ներքև շարտում:

¹ Վերնագրից ներքե, փակագծի մեջ նշված է՝ Արարատյան դաշտում (Մ.Կ.):

Վերջը դարվիշը խեղճ ու կրակ նիւնում ա ծառը, Պիծանին բռնում ա ու վե բերում, տանում էլի էն տոպրակի մեջը դնում, ասում.

— Գնում եմ ուրիշ տեղ, ըստեղ կաց ընչանք ետ գամ:

Հենց որ դարվիշը հեռանում ա, դա տոպրակիցը էլի դուս ա գալիս. էս անգամ տոպրակը քար ա լցնում, որ դարվիշը շիմանա, թե դարդակ ա, ու դնում նիւնում իր տանձի ծառը: Դարվիշը գալիս ա, տոպրակին մտիկ ա տալիս ու ասում. «էս անգամ Պիծիկը ինձ լսել ա, տոպրակումն ա մնացել»: Ասում ա ու վեր ա ունում քցում շալակը, որ տանի տա պառավին՝ մորթի, մի լավ հարիսա էփի:

Ճամփին տենում ա տոպրակը շատ ծանդր ա, ասում ա.— Պիծա՛ն, Պիծա՛ն, ինչ շատ ծանդրացել ես:

Եփոր հասնում ա տուն, տոպրակը վեր ա դնում ու բաց անում՝ ի՞նչ ա տենում, Պիծանի տեղակ մանգը քարեր...

— Վա՛յ,— ասում ա,— էն շան տղեն էլի խափեց ինձ,— ու տոպրակը վեր ա ունում, վազում ա դպա տանձի ծառը: Գնում ա, տենում իրան հմար հսնդարտ նստել ա ծառի վրա, տանձ ա ուտում ու կոթերը գետինը շարտում:

Դարվիշը բարկացած նիւնում ա ծառը՝ դրան դնում ա տոպրակի մեջը, գցում ա շալակը, վե գալիս ու գնում տուն:

Հասնում ա տուն ու ասում.

— Ա՛յ պառավ, դե հիմի դանակը սրի, սրան մորթի, էս գիշեր մի լավ հարիսա էփի: որ առավոտը վե կենամ ուտեմ:

Ու ինքը գնում ա քնելու:

Պառավը դանակը դնում ա առաջն ու սրում ա:

Պիծանը ասում ա.— Ա՛յ պառավ, էդ դանակը տուր տենամ սո՛ւր ա, թե գուլ. թե սուր ա էն վախտը գլուխս կտրի, էլ ինչ ես գուր տեղը ավելորդ սրում:

Պառավը դանակը տալիս ա Պիծանին: Պիծան, դո՛ւ Պիծան, գանակը առնում ա թե չէ՝ տեղիցը վեր ա կենում ու պառավի գլուխը կտրում: Ետով պառավին կոտորում ա ու տանում ա դնում կճուճը, թունդիբը վառում ա, կճուճը դնում թունգրան մեջը, որ հարիսա էփի:

Եփոր էփում ա պրծնում, գնում ա նիւնում սան գլուխը ու ընտեղ մնում:

Առավոտը դարվիշը վեր ա կենում, գնում ա թունգրան միջիցը

Կճուճը հանում ա, տենում ա շատ լավ հարիսա ա էփվել, դնում ա առաջը ու իշտահով ուտում ա, հենց իմանում ա Պիծանի միսն ա: Ուտելու վախտը պառավի տոտիկը ընկնում ա ձեռը. դարվիշը վեր ա ունում էդ տոտիկը ու ասում.— էս Պիծանի տոտիկն ա՞, էս Պիծանի տոտիկն ա՞:

Պիծանն էլ սան գլխիցը ասում ա.— էգ պառավի տոտիկն ա՞, էդ պառավի տոտիկն ա՞:

Դարվիշն ասում է.— Վա՛յ, շան որդի...,— ուզում ա նիլնի սինն ու ընտեղ դրան ձվիկ-ձվիկ անի: Համա չի իմանում, թե ոնց նիլնի ու ասում ա.— Պիծա՛ն, Պիծա՛ն, էդ ոնց նիլար ընտեղ:

Պիծանն էլ ասում ա.— Ա՛յ քո տունը շեն, ըստեղ նիլնելումն ինչ կա. ա՛յ թվանքը վե կալ՝ սանը դեմ գիր, ընենց որ կոթը ներքեն ըլնի, լուվեն վիրկը, ոտդ դիր շախմախի վրա ու բարձրացի, էն վախտը կհասնես ինձ:

Խեղճ դարվիշը ոտը դնում ա շախմախի վրա թե չէ՝ թրը՛խկ, թվանքը բացվում ա ու գուզ դարվիշի փորը մտնում:

Պիծանը վեր ա գալի ու դարվիշի ունեցած շունեցածին տեր ա կաղնում ու ըտենցով հարստանում:

Ասսանից իրեք խնձոր վեր էկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ էս տան տիրոջը:

